

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐԱՆԻ ԶԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարւանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлиς, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Փ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ Է Փ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Օլգա Ստանիսլավովնա Փիթոյեան, Մարգարիտա Իսահան Բէլէցկայա, Նինա Եգորովնա Տէր-Մկրտչեան և Կոնստանտին Եգորովիչ Փիթոյեան երեխաներով յայտնում են ազգականներին և ծանօթներին, որ երկուշաբթի, մայիսի 31-ին,

ԻՍԱՅ ԵԳՈՐՈՎԻՉ ՓԻԹՕՅԵԱՆԻ

մահվան քառասունօրը օրը, պատարագ կը մատուցվի և հոգեհանգիստ կը կատարվի Մոռնու եկեղեցում: Պատարագի սկիզբն է առաւօտեան 10 ժամին, իսկ հոգեհանգիստինը 11½ ժամին:

1—1

Կիրակի, մայիսի 30-ին, Զրինեանց եկեղեցում (Գրիգորիովսկայա փող.) պատարագից յետոյ կը կատարվի հոգեհանգիստ վախճանված երգուեստ հաւատարմատար

ՆԵՐՍԷՍ ԱՍԼԱՆԵԱՆ ԱԹԱԲԵԳԵԱՆԻ

համար, որի մասին հանգուցեալի որդիքը յայտնում են ազգականներին և ծանօթներին: Պատարագը սկսվելու է 10½ ժամին առաւօտեան, իսկ հոգեհանգիստը—12 ժամին ցերեկվայ:

1—2

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Պօրտ-Արտուրի շրջանը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թուրքի և անարկիներ: Փոքրիկ նկատութիւններ. Երեցիկները ընտրութեան առիթով. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շրջը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՊՈՐՏ-ԱՐՏՈՒԹԻՒՆ ՇՐՋԱՆԸ

V

Պօրտ-Արտուրի ափերում, եօթ վերստ տարածութեան վրա, դաստարոված են թնդանթներ, որոնք իրանց բերաններով ուղղված են դէպի ծովը: Նրանց պաշտօնն է պաշտպանել նաւահանգստում եղած նաւերը արտաքին յարձակումներից: Այդ թնդանթների միջոցով աշողվել է մինչև այժմ թոյլ չը տալու, որ եսպոնական զինուորական նաւերը մօտենան Պօրտ-Արտուրի նաւահանգստին:

Ծովածոցը մտնողը տեսնում է աշ կողմից Ոսկէ սարի վրա շինված անեղ մարտկոցները: Չափ կողմում գտնվում է մի թերակղզի, որ յայտնի է Վազրեան Թերակղզի անունով. իսկ նրա ծայրը կոչվում է Վազրեան կամ Տիգրեան Ագի: Այդ թերակղզու վրա նոյնպէս կառուցված են ուժեղ և ամուր մարտկոցներ:

Պօրտ-Արտուր քաղաքը վերաշինված է ծովածոցի աւազանի արևմտեան ափի վրա (հին քաղաքը հանդիպակաց ափի վրա էր): Բաղաբաղկաւ մասի վարչութիւնը, քաղաքային խորհուրդը, Զինական բանակը գտնուված են սեփական շէնքերի մէջ և ունեն մեծ յարմարութիւններ: Նոր քաղաքը ամֆիթատրոնի ձևով բնակ է լեռան լանջը: Հակառակ կողմում բարձրացած է ծովային զորանոցի հոյակապ սպիտակ շինութիւնը, իսկ ներքեւում գտնուված են զինուորական վարչութեան ցածրադիր մոխրագոյն քարաշէն զորանոցները: Ծովածոցի ափին շինված են քաղաքային այգին և ծաղկոցները:

Պօրտ-Արտուրի արտաքին նաւահանգիստը բոլորովին բաց է և խոր: Նա լաւ կայան է նաւատորմի համար և յարմար է բազմաթիւ նաւերի վարժութիւնների և շարժումների համար: Սակայն այդ տեղը փոքր ինչ վտանգաւոր է հարւաւային և արևելեան մրրիկների ժամանակ, որովհետև ալիքները չափազանց մեծ են լինում:

Այդ վտանգից բոլորովին ապահով է Պօրտ-Արտուրից երեսուն վերստ հեռու գտնվող Տալիշնիսի ընդարձակ ծովածոցը, որը մեծ և բարձր հրուանդանների չնորհիւ աւելի լաւ է պատարարված մըր-

բիկներից և ծովի ալիքներից: Այդ պատճառով շատ անգամ պատահել է, որ փոթորիկի ժամանակ Պօրտ-Արտուրի առաջ կանգնած նաւերը, եթէ հնարաւորութիւն չեն ունեցել տեղ գտնել ներքին ծովածոցում, գնացել են Տալիշնիսի այնտեղ պատարարվելու:

Պօրտ-Արտուրում վերջին վիճակագրութեամբ ցուցակագրված էին 28,480 հոգի բնակիչ, չը հաշուվ գործերը: Ռուսները և եւրօպացիների թիւը քաղաքում էին: Սակայն այն էլ պէտք է նկատել, որ Պօրտ-Արտուրի շինացիները մեծ մասամբ մշտական բնակիչներ չեն: Նրանց մեծ մասը նստակեաց չէ Պօրտ-Արտուրում, այլ գալիս է ժամանակաւորապէս կամ առևտրական նպատակներով կամ բանելու քաղաքի, նաւահանգստի և ամրութիւնների շինութիւնների վրա: Զիֆու քաղաքը, որ գտնվում է Պօրտ-Արտուրի հանդէպ չինական հողի վրա, Պեչիլեան պարանոցի միւս ափում, ուղղակի է իւրաքանչիւր տարի դէպի Պօրտ-Արտուր այգիների ժամանակաւոր բնակիչների մեծ բազմութիւն: Զիֆուի և Պօրտ-Արտուրի միջև միշտ տեղի ունէին կենդանի յարաբերութիւններ: Զինական ճանապարհի ոռոսաց շոգենաւերը, մինչև ներկայ պատերազմական գործողութիւնների սկսվելը, ամեն օր կատարում էին կանոնաւոր երթևեկութիւններ: Օտարազգի շոգենաւերը յաճախ այցելում էին նաւահանգիստները, իսկ չինական առաքատաւոր նաւերը և «Չօնկա» կոչված անթիւ նաւակները լողում էին անդադար այդ երկու քաղաքների միջև:

Անցեալ տարվայ ամառը, յուլիսին և օգոստոսին, Պօրտ-Արտուրի չինացիների մէջ լուրեր տարածվեցին Եսպոնիայի հետ մօտաւորապէս պատերազմի մասին և չինացիները թողին գործերն ու մեծ բազմութեամբ տեղափոխվեցին դէպի Զիֆու: Սակայն մի քանի օրից յետոյ վրդովմունքը անցաւ և չինացիները նորից վերադարձան Պօրտ-Արտուր շարունակելու իրանց գործերը:

Վերջապէս այս տարվայ յունվարի վերջին սկսվեց ներկայ ոռոս-եսպոնական պատերազմը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՒՆՑԻԿ ԱԿՆԱՐԿՆԵՐ

Անցեալ կիրակի, մայիսի 23-ին, նշանակված էր Հայոց Դրամատիական ընկերութեան անդամների արտակարգ ընդհանուր ժողով:

Նա չը կայացաւ և, շատ պարզ, սովորական պատճառով. անդամները չէին եկել: Այսօր ժողովը կը կայանայ, որովհետև, գոնէ պէտք է յուսալ, որ 10 հոգի ներկայ կը լինեն, իսկ այդ թիւն էլ այսօր օրինական կը լինի ժողովը կայացած համարելու:

Եւ սակայն արտակարգ ժողովի պարագամունքի առաջնաբեր իրանց լուրջ ընտրութեամբ պէտք է գրաւէին անդամներին. այսօր պէտք է ընկնէ և հաստատվի նախահաշիւ առաջիկայ թատրոնական սեղօնի համար և, բացի դրանից, այսօր առաջարկութիւն կայ վարչութեան կողմից պատուաւոր անդամներ ընտրելու:

Ա՛, ուրեմն կան մարդիկ, որոնք ընկերութեան մի արտակարգ ծառայութիւն են մատուցել, իրանց մտքում ուրախացած կը մտածեն ընկերութեան անդամները, կարգաւոր այդ լուրը: Շատ բնական է այդպէս մտածելը, որովհետև մինչև այսօր բոլոր հայ ընկերութիւնների մէջ կանոնադրութիւնները այնպէս են եղել խմբագրված, որ պատուաւոր անդամ ընտրվում է միայն նա, ով առանձին, արտակարգ, աչքի ընկնող մի ծառայութիւն է մատուցանում ընկերութեան:

Բայց... Դրամատիական ընկերութիւնը մի փոքր բացառութիւն է կազմում այդ կանոնից. նա էլ ունի իւր կանոնադրութեան մէջ այդ յօդուածը, թէ ընկերութեան պատուաւոր անդամ ընտրվում է նա, ով առանձին ծառայութիւն է մատուցել նրան, բայց դրան անմիջապէս հետեւում են հետեւել խօսքերը... «և ով որ կը նուրի ընկերութեան ոչ պակաս քան 1000 ռուբլի»: Ուրեմն, շնորհիւ այդ յօդուածի, ով որ նուրի Դրամատիական ընկերութեան 1000 ռուբլի, կարող է պատուաւոր անդամ ընտրվել և հարցը նրա մէջ է թէ կան նուրիորդներ ընկերութեանը 1000-ական ռուբլի:

Փողի համար պատուաւոր անդամ ընտրել, դա համակերիլ չէ, տրանշում են շատերը: Ես էլ գտնում եմ, որ Դրամատիական ընկերութեան կանոնադրութիւնը—որը, ի դէպ է ասել մշակվել է մի սահմանափակ խմբակի ձեռքով—անհամակերիլ բան է արել, ընդունելով մամոնան իբրև հիմն պատուաւոր անդամութիւն տալու մէկին, բայց... պէտք է հաշուել այդ մտքի հետ, քանի որ նա բեղում է կանոնադրութեան տրամադրութիւնից:

Եւ սակայն, ես մի քանի անգամ չեմ վրստահանում առաջարկել, որ ընդունվի վարչութեան առաջարկութիւնը: Ես ուրախութեամբ կընտրեի պ. Տիգրան Աֆրիկեանին ընկերութեան պատուաւոր անդամ, ոչ թէ նրա համար, որ նա նուրի է 1000 ռուբլի և խոստացել ամեն տարի տալ այդ գումարը, այլ որովհետև նա այդ արել է ինքնաբերաբար: Քանի քանի հարուստներ կան Թիֆլիսում, որոնց համար 1000 ռուբլի տալը Դրամատիական ընկերութեան ոչ մի նշանակութիւն չունի, բայց նրանք չեն տալիս նոյն իսկ այն ժամանակ, երբ նրանց դիմում են, խնդրում են, հասկացնում են ընկերութեան նեղ վիճակը: Եւ յանկարծ, մի այլ քաղաքից, մի անծանօթ մարդ, առանց խնդրելու, ինքնաբերաբար օգնութեան է հասնում և խոստանում է շարունակ հասնել:

Ահա այդ ինքնակամ պատրաստակաւութիւնը, այդ ինքնաբերաբար ցանկութիւնը պէտք է գնահատել և վարձատրել: Ոչ թէ գրառն է գնահատել, այլ անկեղծ ցանկութիւնը՝ նըպաստել մի գործի, որի նպատակն է մայրենի բեմի բարգաւաճումը: Ամեն մի սրտաբուղի գործ համակերիլ է: Եւ մենք ուրախ ենք, որ այդ սրտաբուղի գործի օրինակ դարձեալ գաւառն է տալիս մեզ:

Հ. Ա.

ՓՈՔՐԻԿ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս մայիս ամսին Թիֆլիսի երկու ընկերութիւնների քրօնիկաներում կատարվեց երկու հետաքրքիր դէպք, որ արժէք համե-

մատութեան առնել և որոշ եղբակցութիւններ դուրս բերել. դրանք հայոց դրամատիական ընկերութիւնը և Թիֆլիսի գործակաւտարների փոխադարձ օգնութեան ընկերութիւններն են: Թող ներեն մեզ դրամատիական ընկերութեան և վարչութեան անդամները, որ իրանց գեղարուեստական ընկերութեան անունը դնում ենք պրօպագանդի ընկերութեան կողքին: Գործակաւտարների և դրամատիական ընկերութիւնները յայտարարեցին կայանալիք ընդհանուր ժողովների մասին. առաջինի 104 անդամներից հէնց առաջին ժողովին ներկայ էին մինչև 80 անդամ և ժողովը ի հարկէ կայացաւ, իսկ երկրորդը 200-ից աւելի անդամներից ներկայ էին միայն 17—18 հոգի և ի հարկէ ժողովը չէր կարող կայանալ: Դրամատիական ընկերութիւնը մայիսի 22-ին տալիս է ներկայացում իւր միջոցները աւելացնելու համար և ունեցած դէֆիցիտի վրա մի փոքրիկ գումար ևս աւելացնում, իսկ հետեւեալ օրը գործակաւտարների ընկերութիւնը դրօսանք է սարքում և փառաւոր աշողութեամբ մինչև 2000 ռ. մուտք ունենում և եղած միջոցները խոշոր գումարով աւելանում:

Երկու ընկերութեան մէջ եղած տարբերութիւնը նրանում է, որ դրամատիական ընկերութեան մէջ ոչինչ չը կայ ընկերական և շատ հեռու են հաւաքական ոյժերով գործելու գաղափարից, իսկ երկրորդը և ամենանշանաւորը, որ վարչութիւնը վերաբերվում է դէպի ընկերութեան շահերը ձեռնարկելու, մասնաւոր եթէ աչքի առաջ ունենանք, որ վարչութեան մէջ եղած մարդիկ ունեն բոլոր շահերը աշող գործելու համար:

Դուք է առաջիկայ լինել, որ գործակաւտարների ընկերութիւնը աշխատում է՝ որովհետև անմիջապէս օգտվում են անդամները ընկերութիւնից, այն ժամանակ ինչպէս չանել այնպէս, որ դրամատիական ընկերութեան անդամներն ևս անմիջական շահ ունենան ընկերութեան աշող գործունէութիւնից. ինչպէս համար իւրաքանչիւր անդամին իրաւունք չը տալ օգտվելու ներկայացումներից իրանց վրձարած անդամավճարի չափով. միթէ այլ ևս կապած կարող է լինել, որ այդ սխալմը կարող է շատ անդամներ դրաւել. իբրև փաստեր կարող ենք մատուցել անեղ նախկին մեր Հրատարակչական ընկերութիւնը և գոյութիւն ունեցող գործակաւտարների ընկերութիւնը:

Մենք մեր կողմից առաջարկում ենք իբրև միջոցներ ապագայ աշող գործունէութեան համար, նախ՝ վարչութիւնը լրացնել երիտասարդ եռանդուն անդամներով, այլ ևս ժամանակ չէ առանձին ուղղութիւն դարձնել նրանց դերքին. երկրորդ՝ տալ իրաւունք իւրաքանչիւր անդամին օգտվելու ներկայացումներից անդամավճարի չափով և հաստատված մտերմական և ընկերական յարաբերութիւն վարչութեան և ընկերութեան անդամների մէջ. երրորդ՝ որովհետև մեր բուրժուազատակարար երկու տարվայ փորձից յետոյ կրկին անգամ ապացուցեց, որ անուղղելի է մայրենի բեմի վերաբերմամբ՝ նրա մէջ ցրվել արօնիմալները ամբողջ սեղօնի ներկայացումների համար և չորրորդ՝ տարեկան մի անգամ սարքել ժողովրդական դրօսանք, որից ամենաբեղք կարող է գոյանալ 1000—1500 ռ., մի գումարութիւն որ Թիֆլիսիցիները շատ են սիրում:

Անյուշ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՌԻԹՈՎ

Ով հետեւ է «Մշակ» լրագրի յայտարարութիւնների բաժնին, նա նկատած կը լինի անշուշտ այն բազմաթիւ պաշտօնական յայտարարութիւնները, որոնք վերաբերում են մեր եկեղեցական-ծխական ժողովներին ու գործերին: Հոգեւոր իշխանութեան ներկայացուցիչը՝ գործաւար շարունակ յայտարարում է ծխականներին և ժողովի հրաւիրում, եկեղեցիների տարեկան մուտքն ու ծախքը զըն-

նեղու և վաւերացնելու կամ նոր երէցփոխ ընտրելու: Եւ այդ յայտարարութիւններէ մէջ միշտ շեղուած են լինում, «հրաւիրվում են առաջին անգամ, երկրորդ անգամ, երրորդ և վերջին անգամ» խօսքերը: Այնուհետեւ կարգում ենք ներքին լուրերի շարքում, թէ ծխականները ¹/₅ մասը ներկայ չը լինելով ժողովին՝ նիստ չը կայացաւ:

Հարկւարաւոր օրինակներ կարելի է բերել եկեղեցիների երէցփոխների պատմութիւնից, որ ծխականների ընտրած այդ աստուածաւախ, բարեխիղճ և անշահասէր ճանաչված մարդիկ երէցփոխի պատուաւոր անուն տակ մեծ մասամբ (բացառութիւններ կան) նիւթական և բարոյական փառանք են հասցրել եկեղեցիներին:

Նկատված է, հէնց որ լրանում է պաշտօնավարութեան եռամսյա ժամանակամիջոցը և մօտենում է ընտրութեան սարսափելի օրը, երէցփոխները ընկնում են մի տեսակ տագնապի մէջ: Այդ հոգեւէրները, որոնք սկզբում նազ էին անում, թէ ժամանակ չունեն, կամ թէ վախենում են եկեղեցական փողերին սխալմամբ ձեռք տալ, ծախսել և պատժել, այժմ ցանկութիւն են յայտնում միշտ երէցփոխ ֆիւլայ: Եւ սկսվում է մի շարժում. հէնց իրանք երէցփոխներն առանց ընտրվելու՝ միացած իրանց կողմակիցներին, համախոհներին, նոյն իսկ լայաններին հետ (լայա է կոչվում այն անձը, որին փող են տալիս մի բան աշխույժանելու համար) դռնէ դուռն ընկած աղաչում, պաղատում ծխականներից սրան-նրան, որ իրանց ձայն տան, նորից ընտրեն: Եւ ի՞նչ էք իրա՞ծում, պղտոր ջուր դեռ շատ կայ ձուլել որսալու համար, կարողանում են այդ մարդիկ աշխույժանել գրաւիչ խօսքերով, խոստովանելով, ազդեցութեամբ, կաշառելով, փողով, մէկի մօտ անձամբ գնալով, միւսի մօտ մարդ—բարեխօս ուղարկելով և այլն: Եւ այսպիսով կազմում են մի որոշ խումբ համախոհ ծխականներին, որոնք պատրաստ են կուրօրէն ձայն տալու, որի համար ասեն:

Այդ մարդիկ շատ վարպետ են ընտրութեան գործում: Նրանք լաւ ծանօթ են մեր ժողովրդի, գլխաւորապէս ինտելիգենտ և բարձր դասակարգիչ անտարբերութեան և սառնութեան հետ դէպի՝ եկեղեցական-ծխական գործերը և ընտրութիւնները: Գիտեն փորձերից և ապահով են, որ առաջին ժողովում ընտրութիւն չի կայանայ, որովհետեւ օրէնքով պահանջած ծխականները թիւը ներկայ չի լինի և ընտրութիւնը կը յետաձգվի: Ուստի և ոչինչ չեն անում, այլ մի տեսակ սառն հանդիսատեսի դերը բռնում, իբր թէ շատ էլ ներանց չեն հետաքրքրում ընտրութիւնները: Այն ինչ երկրորդ կամ երրորդ ժողովին, որ օրինական է համարվում, որքան և ծխականներ ներկայ լինեն, նրանք գործում են և բերում են մի պատրաստած խումբ, որ մեծ մասամբ կազմված է լինում տղէտ, ստորին դասակարգից, որոնք ընտրութեան մասին գաղափար անգամ չունեն և մի քանի էլ վարձված ինտելիգենտ մարդկանցից, որոնք խօսելով, աղմուկ հանելով կարողանում են պատուաւոր ծխականների շատերին զոհեցնել, հեռացնել ժողովից և ընտրել իրանց ուղածներին:

Ո՞վ է մեղաւորը. հարկաւ ժողովուրդը, որ իր անտարբերութեամբ ասպարէզը թողել է բաղադրանքներին և ով է տուժողը—եկեղեցին:

Երէցփոխի պաշտօնը հասարակական պատասխանատու պաշտօն է: Դրա ժամանակամիջոցը օրէնքով որոշված է երեք տարի և այն նպատակով, որ ծխականները հերթով, որպէս բարոյական պարտականութիւն, ծառայեն իրանց եկեղեցուն, մանաւանդ որ նիւթական վարձատրութիւն էլ չը կայ դրա համար: Բայց երբ տեսնում են նրանցից շատերին, որ տանեակ տարիներ ծառայելուց յետոյ էլ՝ դարձեալ չարաչար աշխատում են վերնտրվել, ախարայից ընկնում են կասկածների մէջ և քեզ հարց են տալիս, թէ ինչո՞ւ այդ մարդիկ պէնդ կպել են այդ պաշտօնից և վերջապէս զայիս եւ այն տխուր եզրակացութեան, թէ այստեղ մի գաղտնիք կայ, այստեղ անձնական շահ կայ: Եւ երբէք չեն մոռանում մի ծեր մարդու ասած խօսքերը ծխական ժողովում մի երէցփոխի, որ երկար տարիներ ծառայել էր և շատ աշխատում էր կրկին վերնտրվել. «Պարոն, թէ երէցփոխութիւնը հոգու բան է, հոգի դադել է, թող մի քիչ մենք էլ դադենք. թէ մի ջիւրի բան է ու կարելի է, թող մի քիչ էլ մենք ջիւրեղայ աշենք. ի՞նչ ես կպել, թէ մի բան չը կայ»:

Սա մեր հասարակական կեանքի տխուր ե-

րեւոյթներէ մէկն է, որ հետզհետէ լայն ծաւալ է ստանում: Հարկաւոր է կամ ընտրութեան եղանակին մի ձեւ տալ և կամ երէցփոխների ծառայութեան համար մի վերջնական ժամանակամիջոց որոշել, որից յետոյ այլ ևս թոյլ չը տրվի նրանց վերնտրվելու:

Տ. Ե.

ՆԵՐՔԻՆ ԼԱՌԻՆԻՐ

Պօստ-հեռագրական հիմնարկութիւններում թղթակցութիւններ ստանալու ժամանակ, նոր բացատրութեան համեմատ, անձնաւորութիւնը հաստատելու համար բաւական է միայն անցագրերը ցոյց տալ:

Ներքին հայոց հոգեւոր դպրոցում 1903/4 ուսումնական տարում դասընթացն աւարտել են հետեւեալ աշակերտները. 1. Արագան Գէորգ (Թիֆլիսցի), 2. Արագան Յովսէփ (Թիֆլիսցի), 3. Արդութեան Ռուբէն (սանահնցի), 4. Բորեան Արմենակ (գետարեցի), 5. Դեր-զեան Աղէքսանդր (Թիֆլիսցի), 6. Եզրեան Աղէքսանդր (պետադպրոսիցի), 7. Եսայեզեան Սարգիս (կողբցի), 8. Եսայեան Սարգիս (Թիֆլիսցի), 9. Թաքնահեան Համբարձում (մարեցի), 10. Թումանեան Նիկողայոս (ագուլիսցի), 11. Խաչիկեան Դարչո (ղաղախցի), 12. Կաճկահեան Արտաշէս (բուխախցի), 13. Զգաճեան Դարեգին (տրապիզոնցի), 14. Մերիանեան Կարապետ (բուխախցի), 15. Յարութիւնեան Յոյս (Թիֆլիսցի), 16) Յովհաննիսեան Արշակ (նուխցի), 17. Յովհաննիսեան Արտաշէս (Թիֆլիսցի), 18. Սահակեան Բենիամին (Շալալ-օղիցի), 19. Տէր-Մովսիսեան Տիւրմազ (լոնցի), 20. Փամպուկահեան Վահան (կարնցի):

Թիֆլիսի մեշարներին վարչութեան վերջի նիստում վճռված է բոլոր 18 տարեկանից վեր հարկատուներից վերցնել մի մի բոլորի տուրը:

Ներքին գործերի մինիստրութիւնը անանաբուժական կազմի պահպանութեան և կենդանիների ծառայախօսի դէմ Անդրկովկասում միջնորդութեան Դեռնալիւր համար ներկայ մայիս և յունիս ամիսներում՝ բաց է արել 100,000 բուրլու կրեդիտ:

Թիֆլիսի պ. ոստիկանապետը դիմելով քաղաքային վարչութեանը, յայտնում է, որ չը նայած, որ քաղաքը ծախսում է իր քաղաքային տարի 10—11 հազար բուրլի քաղաքի մի քանի փողոցները ջրելու համար, բայց և այնպէս այդ ամենը կատարվում է ոչ բաւարար կերպով և բացի դրանից ջրվում են ոչ բոլոր փողոցները, այլ միայն մի քանի յայտնի փողոցներ և հրապարակներ: Ուստի իր կողմից պ. ոստիկանապետը առաջարկում է մի այնպիսի միջոց, որով կարելի է ջրել մի քանի անգամ աւելի լաւ և շատ փողոցներ, քան ներկայումս է ջրվում և բացի դրանից դեռ քաղաքը նւթական շահ էլ կունենայ: Այդ միջոցը հետեւեալն է: Յայտնի է, որ ներկայումս իւրաքանչիւր տունը դռնապան ունի: Հարկաւոր է, որ քաղաքը իւրաքանչիւր տան տիրոջ ամեն օր անվարձ բաց թողնի քաղաքային ջրանցքից 15 վեբրո ջուր, որով պ. ոստիկանապետը դռնապանների միջոցով ջրել կը տայ նշանակված փողոցները: Զրկուց առաջ պ. ոստիկանապետը յայտնում է, որ սրբաբն կը տայ փողոցները և ապա ջրել կը տայ: Սոյն միջոցը գործադրվում է և Ռուսաստանի գլխաւոր քաղաքներում: Այս ձեւի ջրելը քաղաքին կը նստի ոչ աւելի 12,000 բուրլուց, մի բան, որ ամեն տարի քաղաքը ծախսում է, բայց չէ հասնում նպատակին: Քաղաքը բացի 10—11 հազար ծախսելուց, կորցնում է և ահագին քանակութեամբ ջուր, մինչդեռ ներկայ առաջարկութեամբ քաղաքը դրամական ծախսերից ազատվում է:

Ք ու թ ա յ ի ի քաղաքային վարչութիւնը ինչպէս ասում է ձեռ. Պուր. լրագրերը, իրաւունք է ստացել հետեւեալ ուսումնական տարվայ ընթացքում բանալու երկու քաղաքային նոր դպրոցներ էլ: Բացի դրանից՝ ինչպէս լսվում է, ժողովրդական դպրոցները տեղութիւնը նոյնպէս բաց է անում Քութայիսում երկու ուսումնարան:

Ռուսական Կայսերական թոշնաբուժական ընկերութեան Կովկասեան բաժինը, խնդրել է յարուցել, որ իրան տրվի Թիֆլիսի Մուշտայից ազգում գոյութիւն ունեցող ռուֆէտի ետեւում 400 քառակուսի սաժէն տեղ՝ փորձնական

թոշնաբուժական օրինակելի կայարան հիմնելու համար:

„Варш. Днев.“ լրագրերը հաղորդում է, որ վերջին ժամանակներս Վարշաւայի և Լօձի նոտարները գրասենեակներում գործերը ետում են. բոլոր ծառայողներն զբաղված են բողոքի կամ պրօտեստի ենթարկվող մուհակներով: Օրեր են պատահում, երբ նոտարները՝ բառի բուն նշանակութեամբ՝ անկարող են լինում բաւարարութիւն տալ պրօտեստի եկած բոլոր մուհակներին: Այդքան բողոքով մուհակները նշան են գործերի կանգ առնելուն և բազմաթիւ անանկութիւններին:

Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը անհրաժեշտ է գտել հիմնել ուղղակի մարդատար և ծանրացատար հաղորդակցութիւն արտասահմանեան գծերի հետ՝ գոնէ սկզբներում Կովկասի ամենազբաւուր կայարանների համար: Բաթումը, Թիֆլիսը և Բաքուն թէ ամենակարգ և թէ շրջանաւոր գնացքներով պէտք է միացվեն Կ. Պոլիս, Վիեննայի, Բէրլինի, Պարիզի, Դրեզդենի, Միւնխենի, Բազն-Բադենի, Կարլսբադի, Վիսբադենի Էմսի, Հոմբի, Աթէնքի և Ասիէնի հետ: Ի հարկէ միացնել չէ նշանակում, որ կը շինվեն նոր գծեր, ոչ—կը տրվեն ուղղակի յարաբերութեան տոմսակներ թէ մարդկանց և թէ ծանրոցների համար:

ԿԱՂԶՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Ամիս 23-ին տեղիս քաղաքային դպրոցի վերահսկող Կիրպիլի նախաձեռնութեամբ հանդիսաւոր կերպով տօնվեց ուսու երաժշտագէտ՝ Մ. Ի. Գլին-կայի ծննդեան հարիւրամեակը: Դպրոցի դահլիճի բեմական մասը գեղեցիկ ճաշակով զարդարված էր: Բեմի ճակատին թարմ ծաղիկներից հիւսած՝ պսակի մէջ դրված էր յօբելանի նկարը, իսկ աջ ու ձախ կողմերում մակագրված էր նրա գրած օպերաների վերնագրերը, 1804 և 1904 թվերն ու մի քանի պատշաճաւոր նկարներ: Հանդիսի ժամանակ մէջ ընդ մէջ նուագում էր գլխաւորական երաժշտական խումբը յօբելանի օպերաներից, որին ձայնակցում էր օֆիցէր Ջաբոյկու պատրաստած քառաձայն խումբը: Պ. Վերաստուկը՝ մի կարճ առաջարկից յետոյ՝ կարգաց յօբելանի համառօտ կենսագրութիւնը և ապա ազգային հիմնով փակվեց հանդէսը: Հանդիսին հրաւիրված էին ոչ միայն գլխաւորական բարձր պաշտօնեաներ այլ և տեղիս հայ հասարակութիւնից շատերը: Ինչպէս ամեն անգամ, այնպէս էլ այս անգամ, յարգելի վերահսկողը, լայն տեսակէտով է նայել գործին առանց ազգային խտրութեան, և ամեն բանում համերաշխութեան տրամադրութիւն է ցոյց տալիս»:

ՇԱՄԱՆՈՒՅԸ մեզ գրում են. «Կատարած շունը սպանել է մի 16 տարեկան աղջկայ ու գլուխը կիւրի, քաղաքից 6—7 վերստ հեռու գտնվող «Չուխուրեւորտ» կոչված մօլոկանի գիւղում: Դէպքը այսպէս են պատմում. օրիորդին մայրը ուղարկում է գիւղից քիչ հեռու այգին շոր լուանալու. մայրը տեսնում է, որ աղջիկը ուշացաւ, գնում է դռներու աղջկան, հետն առնելով պատահող մարդկանցից մէկին: Երբ մտնում են այգին, տեսնում են, որ շունը ուսում է արգէն սպանած աղջկայ գլուխը: Սկսում են ձէչ ու աղաղակներով ազատել գոնէ աղջկայ մարմինը՝ լափող շան բերանից. բայց գաղանք յարձակվում է դրանց վրա և սաստիկ վիրաւորում առաջինի կուրծքից, երկրորդին՝ երկու ձեռքերից: Քաղաքիս ոստիկանութիւնը անցելով քաղաքի ուղարկեց Թիֆլիսի բժշկական խորհրդին սպանած շան գլուխը և երկու վիրաւորներին: Անցեալ կիրակի հողին յանձնեցին անմեղ զոհի մարմինը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԼԵՏԻՆԱՅԻՆ ՇՈՒՐՁԸ

Միջնորդութեան նոր փորձեր: Վիեննայից հեռագրում են, թէ դիվանատարական շրջաններում նորից խօսում են, որ Անգլիան փորձեր է անում առաջարկել պատերազմող կողմերին իր միջնորդութիւնը: Հաւատացնում են, որ այդ փորձը անվում է Եւրոպայի համաձայնութեամբ: (Нов. Время)

Նապօմայից չը պէժ է Մանչուրիայի խորհրդ գնաց: «National Zeitung» լրագրի թղթակիցը հաղորդում է իր խօսակցութիւնը հապօնական մի բարձրաստիճան պաշտօնաւորի հետ Տօկիօում: Պաշտօնեան համոզված է, որ պատերազմը աշող կը կունենայ Եւրոպայի

նիայի համար, բայց նա համոզված է մի և նոյն ժամանակ, որ վտանգաւոր է եւրոպացիների համար Մանչուրիայի խորհրդ մտնել: Նա ասել է, որ եւրոպական բանակի ղեկավարները գիտեն այդ վտանգը, բայց կարող են ոգևորվել և խաբվել ուսանելի նահանջնով: Եւրոպական յաղթութիւնները նա վերագրում է եւրոպական օֆիցէրների բաշխութեան, իսկ այդ բաշխութեան—նրանց չարաշ կեանքին: Օֆիցէրների մեծ մասը պատկանում է ամենահասարակ գիւղական ընտանիքներին. դրանք ուժեղ մարդիկ են, ընտելացած աշխատանքի և ամենապարզ նիստ ու կացի և շատ քիչ բանով գոհացող են: (Новое Время)

Կոնսթ Կոնսոնում: Զիֆուրից հեռագրում են «Berliner Local Anz.» լրագրից, որ ուսուցչադպրերը, նահանջելով դէպի Պօրտ-Արտուր, ցոյց են տալիս եւրոպացիներին ամեն մի քայլում յամառ դիմադրութիւն: Նրանք աւելում են երկաթուղին, այրում են բոլոր շինութիւնները, մի խօսքով Կլանտունեան թեւրակղզին վերածում են անապատի: Զինական ծովահէնների ջօնակները պտտում են թեւրակղզու մօտ, ինչպէս աղաւանները լէնձ վրա: Ծովահէնները կտրել են հաղորդակցութիւնը Զիֆուրի և Պօրտ-Արտուրի մէջ:

Հետաքրքրական է, թէ որտեղից ուրեմն թղթակիցը բաղել է իր տեղեկութիւնները, եթէ հաղորդակցութիւնը ընդհատված է: (НОВОСТИ):

Միսիսօմարների վախը: «Tamps» լրագրի թղթակիցը Եւրոպայի գնալիս խօսել է շոգեհաւի վրա մի քանի ֆրանսիական միսիսօմարների հետ, որոնք վաղուց գործում են Ասիայի Արեւելքում և լաւ ծանօթ են երկրի տրամադրութեան հետ: Միսիսօմարներին յուզում է այն միտքը, որ Ռուսաստանը կարող է պատերազմի մէջ մի շարք անաշուղթիւններ կրել: Եթէ եւրոպացիները յաղթական դուրս գան, եւրոպացիները լիճակը Արեւելքում շատ անհաճոյ կը լինի:

Միսիսօմարները մասնացոյց են անում մի շարք փաստերի վրա, որոնք առաջ են բերված այն գեղեցիկների մէջ, որ ամեն կողմից ստանում է օտարազգի բարոյութիւնների ընդհանուր պրօկլորը: Հեռագրում Արեւելքում, հայր Ռօբերտը: Այդպիսով Զինաստանում եւրոպացիները աֆիցներ են կայցնում և բրօշուրներ են տարածում եւրոպական յաղթութիւնները գովաբանող: Որպէս զի աւելի սաստիկ ազդեն ժողովրդական երեւակայութեան վրա, նրանք ուղարկում են ամենախուլ գիւղերը հաղաբարձ կարբիկատուրաներ, որոնք պատկերացնում են ուսուցչ նաւատորմի կրած աւօթալի պարտութիւնը:

«Բացի մամուլի և նկարչութեան միջոցով կատարած այդ եռանդուն և համատարած պրօպագանդայից, նրանք հաղաբարձոր մանր ինտրիգներ են սարքում, որպէս զի ազդեցիկ մանրաբաններին Եւրոպայի կողմը ձգեն, և այդ, մեծ մասամբ, աշողվում է իրանց: Եւրոպական էմիգրանները բարոյութում են համառախականութիւն. չինացիներին նրանք խոստանում են օգնութիւն և աշակցութիւն եւրոպացիների դէմ կռուելու համար: Եւ այդ ամենը կատարվում է ոչ թէ միայն Զինաստանում, այլ և ամբողջ Ասիայում և Մալայեան արշաւապետսում:

«Եթէ Եւրոպայի յաղթական դուրս գալ պատերազմից—եւրոպացիները և հայր Ռօբերտը—այն ժամանակ եւրոպական ազդեցութիւնը Հեռագր-Արեւելքում մահացու հարուած կը տաւայ» (НОВОСТИ)

Զինացիների արածած լուրերը: Վեց չինացիներ փախել են Պօրտ-Արտուրից Նիւժուան և այդտեղ պատմել են «Daily Mail» լրագրի թղթակցին սարսափելի բաներ Պօրտ-Արտուրի մասին: Թղթակցին էլ, հաւատ ընծայելով ներանց պատմածներին, ուղարկել է իր լրագրին: Եթէ հաւատանք այդ չինացիներին, «Պօրտ-Արտուրի բնակիչները վիճակը սոսկալի է. գնեք այնքան թանգ են, ինչպէս սովի ժամանակ: Ռուսներից շատերը արդէն ստիպված են եղել չինական անդով բաւականաւոր, բայց այդ էլ շատ թանգ է: Այլուր քաղաքացիները աւելի չը կան: Բոլոր քաղաքացիները ստիպված են գլխաւորական պարտաւորութիւններ կատարել: Հէնց որ սկսվում է թնդանթաձգութիւնը, բոլոր խանութները

